# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

## ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2018 թ. ապրիլի 17-ի թիվ 7 նիստի

Գիտական խորհրդի 20 անդամներից ներկա էին 18-ը:

Նիստին մասնակցում էր ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը:

Նիստը բացեց ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, գիտխորհրդի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը՝ փաստելով, որ նիստն իրավազոր է և քվեարկության դրեց օրակարգը՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի ընտրություն:

Օրակարգը բաց քվեարկությամբ միաձայն հաստատելուց հետո գիտխորհուրդն անցավ օրակարգային հարցի քննարկմանը:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:

Առաջնորդվելով ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի 9-րդ կետով՝ գիտխորհուրդը ընտրեց նիստի նախագահող: Առաջարկ եղավ նիստի նախագահող ընտրել Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանին: Գիտխորհրդի նիստին ներկա անդամները բաց քվեարկությամբ միաձայն նախագահող ընտրեցին պրոֆեսոր Դ. Պետրոսյանին:

Ստանձնելով նիստը նախագահողի պարտականությունները՝ Դ. Պետրոսյանը հայտնեց, որ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի պաշտոնը զբաղեցնելու համար ֆակուլտետի ամբիոնները առաջադրել են գործող դեկան Նաղաշ Նարինբեկի Մարտիրոսյանի թեկնածությունը: Դ. Պետրոսյանը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին և հայտնեց, որ գործում առկա են ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգով սահմանված բոլոր փաստաթղթերը:

Համաձայն ընթացակարգի՝ գիտխորհուրդը ծրագրային ելույթի համար սահմանեց ժամակարգ՝ մինչև 15 րոպե, և ձայն տվեց դեկանի պաշտոնի թեկնածու, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Ն. Մարտիրոսյանին:

Թեկնածուի ելույթից հետո նախագահողը գիտխորհրդի անդամներին առաջարկեց հարցեր ուղղել ելույթ ունեցողին: Հարցեր չկային: Սահմանվեց մինչև 5 րոպե ժամակարգ ելույթների համար: Տեղի ունեցավ թեկնածության քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Մ. Մ. Հովսեփյան, Ա. Շ. Ավետիսյան, Ք. Ա, Ալազուլյան, Ն. Է. Վարդանյան, Դ. Հ. Ալավերդյան, Ջ. Ջ. Սարգսյան, Ա. Տ. Պողոսյան, Գ. Գ. Ջուլհակյան, Դ. Վ. Պետրոսյան, ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղի փոխտնօրեն, կրթական ու գիտական ծրագրերի ղեկավար Է. Պ. Կարապետյան, ԵՊՀ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան:*

Ելույթ ունեցողներն իրենց աջակցությունը հայտնեցին Ն. Մարտիրոսյանի թեկնածությանը:

Ելույթներից հետո նախագահողը ֆակուլտետի գիտխորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը:

Նախագահողի առաջարկով՝ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար ֆակուլտետի գիտխորհրդի անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա. Ավետիսյան (նախագահ), Ա. Մենեմշյան, Լ. Հարությունյան:

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

ԼՍԵՑԻՆ.- Հաշվիչ հանձնաժողովի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Նշվեց, որ գիտխորհրդի 20 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 18-ը: Բաժանվել է 18 քվեաթերթիկ: Քվեատուփը բացելիս այնտեղ եղել է 18 քվեաթերթիկ: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

ԿՈՂՄ՝ 18,

ԴԵՄ՝ 0,

ԱՆՎԱՎԵՐ՝ 0:

ԼՍԵՑԻՆ.- Նիստի նախագահ Դ. Պետրոսյանի առաջարկը՝ փակ գաղտնի քվեարկության արդյունքները բաց քվեարկությամբ հաստատելու վերաբերյալ:

Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Նաղաշ Նարինբեկի Մարտիրոսյանին համարել ընտրված ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Դ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ